



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Գերմանական  
համագործակցություն  
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by  
**giz**  
Deutsche Gesellschaft  
für Internationale  
Zusammenarbeit (GIZ) GmbH

# Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար (ԷԿՈՍԵՐՎ)

## Պատվիրակող՝

Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ)

## Հիմնական գործընկերներ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

**Տևողություն՝** դեկտեմբեր 2018թ. – դեկտեմբեր 2024թ.

**Բյուջե՝** 20 810 870 €, համաֆինանսավորում՝ 4 000 000 € EU4Sevan


**Երկրներ՝** Հայաստան, Ադրբեջան և Վրաստան

**Երկրաձգում՝** ԷԿՈՍԵՐՎ ծրագրի երկրաձգումը հաստատվել է մինչև 2024 թվականի դեկտեմբերը (EU4Sevan), իսկ ԷԿՈՍԵՐՎ ծրագրի գործունեությունը կշարունակվի մինչև 2023 թվականի օգոստոսը:



ԲՆԱԴԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդկանց և բնության համար



## Համառոտ նկարագրություն

ԷԿՈՍԵՐՎ բնապահպանական ծրագիրն աջակցում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին: Ծրագիրը պատվիրակված է Գերմանիայի դաշնային հանրապետության կողմից և իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից:

ԷԿՈՍԵՐՎ ծրագրի նպատակն է բարելավել արոտավայրերի կայուն կառավարման նախապայմանները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական համայնքների բնակչության էներգետիկ անվտանգությանը:

Ծրագրի առանցքային միջոցառումներից են բնապահպանական իրազեկման բարձրացումը և կրթությունը:

## Մարտահրավերներ

Արոտավայրերի և անտառների դեգրադացման հիմնական գործոններից են արոտավայրերի գերշահագործումը և թերօգտագործումը, վառելիքայտի մեծ պահանջարկը, այլընտրանքների բացակայությունը և բնապահպանական իրազեկվածության ցածր մակարդակը:

Գյուղական համայնքներում բնակչությունը բախվում է «էներգետիկ աղքատության» խնդրին, և մարդիկ օգտագործում են բնական ռեսուրսներն իրենց հիմնական ջեռուցման կարիքները հոգալու համար: Առկա է հիմնավոր տվյալների, կանոնների, կայուն գործելակերպի և գիտելիքների պակաս: Բնական պաշարների կայուն և կենսաբազմազանության տեսանկյունից բարենպաստ օգտագործման ամբողջական մոտեցումները բավարար չեն:

## Միջամտության ոլորտները

- Արոտավայրերի և խոտհարքների / էներգիայի վերաբերյալ տվյալների կիրառում որոշումների կայացման գործընթացում:
- Արոտավայրերի կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի բարելավում (միջոլորտային համագործակցություն):
- Արոտավայրերի կայուն կառավարման, էներգաարդյունավետության և այլընտրանքային էներգիայի պիլոտային գործողությունների իրականացում:
- Բնապահպանական կրթություն և իրազեկվածության բարձրացում:
- Տարածաշրջանային փորձի փոխանակում:


# Արդյունքներ և ձեռքբերումներ

## Արտավայրերի կայուն կառավարում

- Հայաստանի ողջ տարածքի արտավայրերի և խոտհարքների քարտեզագրում:
- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կարողությունների զարգացում GIS քարտեզագրման մոդելների ապագա օգտագործման համար:
- Անասնակերի արտադրության և արտավայրերի բարելավման աշխատանքներին

աջակցություն՝ որպես արտավայրերի վրա ճնշումը նվազեցնելու և գյուղական բնակչությանը եկամտա ապահովելու այլընտրանքային լուծում:

- Աջակցություն ՀՀ բնական կերհանդակների՝ արտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակին:



## Էներգաարդյունավետության բարելավում գյուղական բնակավայրերում

ԷԿՈՍԵՐՎ ծրագիրն աշխատել է շուկայական մոտեցումների ուղղությամբ՝ էներգաարդյունավետությունը (ԷԱ) բարձրացնելու և/կամ այլընտրանքներ տրամադրելու միջոցով գյուղական վայրերում ջեռուցման համար վառելիքայտի (և գոմաղբի) օգտագործումը նվազեցնելու նպատակով:

- Կոշտ կենսավառելիքով աշխատող վառարանների ԷԱ գնահատում և բարձր ԷԱ ունեցող մոդելների առանձնացում:
- Տեղերում արտադրված ԷԱ վառարանների ձեռքբերում (համաֆինանսավորմամբ) Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերի պիլոտային

համայնքների ավելի քան 70 շահառու ընտանիքների կողմից թեթևացնելով հատկապես կանանց բեռը կենցաղում:

- Տեղական գործընկեր կազմակերպությունների կողմից ծրագրի մոտեցումների կրկնօրինակում և ավելի քան 110 ԷԱ վառարանների տարածում:
- Վառելիքայտով ջեռուցման գործելակերպի և հեռանկարների վերաբերյալ 380 հարցվողների հետ գեներալային տարբերակված սոցիալ-տնտեսական հետազոտության իրականացում:



## Բնապահպանական կրթություն և իրազեկության բարձրացում

Ռազմավարական համագործակցություն Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ

Բնապահպանական ուսումնական ծրագրեր և կարողությունների զարգացում

- Բակլավրական և մագիստրոսական ծրագրեր:
- Նոր բակլավրական ծրագիր «Ճշգրիտ գյուղատնտեսություն»:
- Նոր մագիստրոսական ծրագրեր «Կայուն գյուղատնտեսություն» և «Ճշգրիտ գյուղատնտեսություն»:
- Բարեփոխված մագիստրոսական ծրագրեր «Անտառագիտություն» և «Օրգանական գյուղատնտեսություն»:
- Ուսուցանողների վերապատրաստում և կրթական նյութերի մշակում:



### Կանաչ նորարարական գաղափարներ (Greenovation)

Տարածաշրջանային մրցույթի արդյունքում ընտրվել են երեք հաղթող կազմակերպություն, որոնք իրենց ծրագրերն իրականացրել են Տավուշի, Արմավիրի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում:

### Ֆինանսական և բնապահպանական գրագիտություն՝ ուղղված Հայաստանի գյուղական բնակավայրերում էներգաարդյունավետության խթանմանը

- Հայաստանի 10 մարզի գյուղական բնակավայրերից ավելի քան 3600 բնակիչ մասնակցել են ուսուցումների՝ ընտանեկան բյուջեի կառավարման, էներգաարդյունավետության և բնապահպանական գրագիտության թեմաներով:
- Մշակվել են գործիք-հաշվիչներ, որոնք ցույց են տալիս ընտրված էներգաարդյունավետության միջոցների համար անհրաժեշտ ներդրումները և խնայողությունները:
- Գրանցվել են հաջողության պատմություններ, երբ ուսուցման մասնակիցները էներգաարդյունավետության ուղղությամբ կոնկրետ քայլեր են ձեռնարկել տնային տնտեսությունների կամ համայնքային մակարդակում:



Սևանա լճի մասին բնապահպանական իրազեկման արշավի շրջանակում սոցիալական գովազդային վահանակներ են տեղադրվել պլաստիկ տոպրակների և համավարակից առաջացող թափոնների կողմից շրջակա միջավայրի և ջրի աղտոտվածության մասին իրազեկումը բարձրացնելու նպատակով:

### Բնապահպանական կրթական կենտրոնի բացում

ԳՄՀԸ և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի համագործակցության արդյունքում ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում բացվեց Հայաստանի կենսաբազմազանության տեղեկատվական և կրթական կենտրոն՝ Էկոէպիկենտրոնը:

## «Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման ծրագրի Գեղարքունիքի մարզում

Ծրագիրն աջակցում է ՀՀ Կառավարության 15-րդ միջոցառմանը՝ ուղղված ՀՀ Գեղարքունիքի մարզում ՔՈՎԻԴ-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացմանը:

### Ծրագրի հիմնական արդյունքները 2021թ.-ին.

- ՔՈՎԻԴ-19-ի հետևանքով իրենց եկամուտը կորցրած 1012 մարդու կարճաժամկետ աշխատանք է տրամադրվել:
- 6 գետերի ափամերձ գոտիներում տնկվել է ավելի քան 1 մլն. ուռենու և բարդու կտրոն:
- Սևանա լիճ հոսող 10 գետերի երկայնքով մաքրման միջոցառումների արդյունքում հավաքվել է 376 150 կգ կոշտ թափոն, որից 1107 կգ վերամշակվող պլաստիկ և ապակի:
- Ավելի քան 1000 մարդ աշխատանքային վերապատրաստում է անցել՝ նախքան տնկման և մաքրման աշխատանքները: Շուրջ 200 բնակիչ մասնակցել է թափոնների կառավարման 3 մոդուլային դասընթացների, ինչպես նաև բնապահպանական միջոցառումների:



### Հասցե՝ ԳՄՀԸ

Հանրապետության 59, Երևան 0010, ՀՀ Վերնիսաժ բիզնես կենտրոն